Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի դասվարի թափուր տեղի համար (14 դասաժամ)

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում/Ձև 1/, մեկ լուսանկար 3 X4 չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. Ինքնակենսագրություն/Ձև 5/
5. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
6. այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները հետ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին**, Ֆանտանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ֆանտան Գ.Ոպանյան փողոց 47: Տեղեկությունների համար զանգահարել 077-808-810 հեռախոսահամարով: